ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 19 -Ն

«25» հունվարի 2021 թ.

ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ՁԵՎՈՎ ՊԱՏԻԺ ԿՐՈՂ ԵՎ/ԿԱՄ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ 2020-2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կրթության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝ ազատազրկման ձևով պատիժ կրող և/կամ կալանավորված անձանց հանրակրթական հատուկ հաստատության 2020-2021 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները՝ համաձայն Հավելված 1-ի:

Վահրամ Դումանյան

Recoverable Signature

X

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211

Հավելված 1
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարի
2021 թվականի _____ __-ի
N ____- Ն հրամանի

ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ՁԵՎՈՎ ՊԱՏԻԺ ԿՐՈՂ ԵՎ/ԿԱՄ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ 2020-2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

1. «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից մշակված այլընտրանքային (հեղինակային) ազատազրկման ձևով պատիժ կրող և/կամ կալանավորված անձանց համար հանրակրթական հիմնական հատուկ պետական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության (այսուհետ՝ Հաստատություն) 2020-2021 ուսումնական տարվա այլընտրանքային (հեղինակային) ուսումնական պլանները (այսուհետ՝ Ուսումնական պլան) մշակված են հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2020-2021 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանների հիման վրա՝ հաշվի առնելով ազատազրկման ձևով պատիժ կրող և/կամ կալանավորված անձանց պահման՝ անվտանգության, նյութակենցաղային, շենքային, ինչպես նաև այդ անձանց սոցիալ-հոգեբանական, կրթամշակութային և վարքային առանձնահատկությունները:

2. Հաստատությունում անձի ձևավորման, նրա սոցիալ-հոգեբանական հմտությունների և նախասիրությունների զարգացման նպատակով կազմակերպված խմբակների գործունեությունը իրականացվում է՝ հանրակրթական հիմնական հատուկ պետական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատությունների 2020-2021 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանի 28-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն:

3. Հաստատության ավագ դպրոցում (դասարանում) ուսուցումը կազմակերպվում է «Ազատազրկման ձևով պատիժ կրող և/կամ կալանավորված անձանց համար նախատեսված ավագ դպրոցի արհեստագործական հոսքի 2020-2021 ուսումնական տարվա ուսումնական պլանի» (սույն Հավելվածի Աղյուսակ 2) հիման վրա:

4. Ուսումնական պարապմունքները Հաստատությունում սկսվում են 2020 թվականի սեպտեմբերի 15-ին, ավարտվում՝ 2021 թվականի հունիսի 4-ին՝ 5-օրյա աշխատանքային շաբաթվա դեպքում ապահովելով առնվազն 34 ուսումնական շաբաթ՝ յոթից տասներկուերորդ դասարանների համար:

5. Հաստատությունում (7-12-րդ դասարաններ) գործում է սովորողների գնահատման 10-միավորային սանդղակ:

6. Հաստատությունում խմբային ուսուցման կազմակերպման հիմնական ձևը դասն է: Դասի (մեկ դասաժամի) տևողությունը 45 րոպե է:

7. Ուսումնական պարապմունքների ընթացքում 7-12-րդ դասարանների սովորողներին տրվում են արձակուրդներ՝ աշնանային՝ 2020թ. նոյեմբերի 2-ից 15-ը ներառյալ, ձմեռային՝ 2020 թվականի դեկտեմբերի 28-ից 2021 թվականի հունվարի 10-ը ներառյալ, գարնանային արձակուրդ չի նախատեսվում:

8. Հաստատությունը կարող է ներդնել նաև նոր առարկաներ (դասընթացներ)՝ դրանց ծրագրերը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կողմից հաստատվելուց հետո:

9. Հաստատության ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխումը կատարվում է մանկավարժական խորհրդի որոշմամբ՝ ելնելով Հաստատության, դասարանի պատրաստվածությունից, մանկավարժներով, ծրագրերով, դասագրքերով և երաշխավորված լրացուցիչ առարկայացանկի որևէ առարկայի լիարժեք ուսուցման կազմակերպման նպատակով Նախարարության կողմից հանրակրթական ուսումնական հաստատությունների համար երաշխավորված այլ ուսումնական գրականությամբ ապահովվածությունից և ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ այլ պայմաններից, ինչպես նաև Նախարարության հանձնարարականներից:

10. Դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխումը պարտադիր է:

11. Դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի շրջանակում դասավանդվող առարկայացանկը ամրագրվում է Հաստատության ուսումնական պլանում և դասացուցակում:

12. Հաստատության դասարանի (խմբի) միջին խտությունը սանիտարական նորմերի պահպանմամբ սահմանվում է՝ 20 աշակերտ (ընդ որում՝ սովորողների թիվը դասարանում (խմբում) չի կարող գերազանցել 25-ը):

13. Հանրակրթական հատուկ հաստատությունը կարող է հանրակրթությունը իրականացնել բազմահամակազմ կամ թերբեռնված դասարաններում՝ հաշվի առնելով հանրակրթություն ստացող ազատազրկման ձևով պատիժ կրող և/կամ կալանավորված անձանց տարբեր քրեակատարողական հիմնարկներում պահելու փաստը և մի շարք այլ առանձնահատկություններ (օրինակ՝ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 68-րդ հոդված՝ ուղղիչ հիմնարկում դատապարտյալներին անջատ պահելը և այլն):

14. Սույն հանրակրթական հատուկ հաստատության ուսումնական պլանների ընդհանրական պարզաբանումներով չկարգավորված հարցերը կարգավորվում են հանրակրթության բնագավառը կարգավորող օրենսդրությամբ (ՀՀ Սահմանադրություն, միջազգային պայմանագրեր, օրենքներ, ենթաօրենսդրական ակտեր և այլն) և դրա շրջանակներում Նախարարության կողմից Հաստատությանը տրված թույլտվություններով և համաձայնություններով:

15. Սույն Հավելվածի աղյուսակների պարզաբանումներ.

1) Սույն Հավելվածի Աղյուսակներ 1-ում և 2-ում՝ անձի ձևավորման, նրա սոցիալ-հոգեբանական հմտությունների և նախասիրությունների զարգացման նպատակով յուրաքանչյուր դասարանի համար կազմակերպվում է 1 (մեկ) խմբակ: Խմբակները կոմպլեկտավորվում են՝ ըստ երեխաների (անձանց) նախասիրությունների:

16. «Ազատազրկման ձևով պատիժ կրող և/կամ կալանավորված անձանց հանրակրթության հատուկ հաստատության ուսումնական պլանը» կազմված է «Հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված և հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական

հաստատությունների 2020-2021 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլաններ»-ի պահանջներին համապատասխան:

Աղյուսակ 1

Ազատազրկման ձևով պատիժ կրող և/կամ կալանավորված անձանց հանրակրթական հատուկ հաստատության 2020-2021 ուսումնական տարվա ուսումնական պլան

Ուսումնական առարկաներ	**Շաբաթական ժամերի քանակը**		
	VII	VIII	IX
Հայոց լեզու	3	3	3
Գրականություն	2	3	3
Ռուսաց լեզու	3	3	3
Օտար լեզու	2	2	2
Աշխարհագրություն	2	2	-
Հայաստանի աշխարհագրություն	-	-	2
Համաշխարհային պատմություն	2	2	1
Հայոց պատմություն	2	2	2
Հայոց եկեղեցու պատմություն	1	1	1
Հանրահաշիվ	3	3	3
Երկրաչափություն	2	2	2
Ինֆորմատիկա	1	1	1
Ֆիզիկա	2	2	2
Քիմիա	1	2	3
Կենսաբանություն	2	2	3
Տեխնոլոգիա	2	-	-
Կերպարվեստ	1	-	-
Ֆիզկուլտուրա	3	3	3
Հասարակագիտություն	-	2	1
Ընդամենը	34	35	35

Աղյուսակ 2

Առարկայախումբ	**Ուսումնական առարկաներ**	**Շաբաթական ժամերի քանակը**		
			I	XII
	Հոսքային բաղադրիչ			
Մասնագիտական դասընթացներ (առարկաներ)[1]			3	15.5
	Ընդհանուր հանրակրթական բաղադրիչ			
Ընդհանուր հանրակրթական առարկաներ	Հայոց լեզու			3
	Հայ գրականություն			2
	Հայոց պատմություն			2
	Օտար լեզու			2
	Ռուսաց լեզու			2
	Հասարակագիտություն			1
	Մաթեմատիկա (Հանրահաշիվ և մաթ. անալիզի տարրեր, Երկրաչափություն)			3
	Բնագիտական առարկա [2]			1
	Բնագիտական առարկա[2]			-
	Բնագիտական առարկա[2]			-
	Բնագիտական առարկա[2]			-
	Ինֆորմատիկա և ՏՀՏ			1
	Ֆիզկուլտուրա			1.5
	Դպրոցական բաղադրիչ			-
Ընդամենը		4	4	34

Ազատազրկման ձևով պատիժ կրող և/կամ կալանավորված անձանց համար նախատեսված ավագ դպրոցի արհեստագործական հոսքի ուսումնական պլան X-XII դասարաններ

Սույն աղյուսակում՝

ա. «[1]» նշագրումը նշանակում է, որ մասնագիտական դասընթացներ (առարկաներ) են համարվում դպրոցի կողմից իրականացվող նախամասնագիտական ուսումնական ծրագրերը:

բ. «[2]» նշագրումը նշանակում է, որ բնագիտական առարկաներ են համարվում «Ֆիզիկան», «Քիմիան», «Կենսաբանությունը» և «Աշխարհագրությունը»: